ԷՄՄԱՈՒՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՂՈՒԿ. 24.13-32

13 Եւ ահա նորանցից երկուսը միեւնոյն օրը մի գյուղ էին գնում, որ վաթսուն (11K) ասպարէզ Երուսաղէմիցը հեռու էր, անունն Էմմաուս: 14 Եւ նորանք իրար հետ խօսում էին այն բոլոր անցած բաների համար: 15 Եւ եղաւ որ նորանք խօսելիս եւ վիճաբանելիս, հէնց ինքն Յիսուսը մօտեցաւ եւ գնում էր նորանց հետ: 16 Բայց նորանց աչքերը բռնված էին, որ չճանաչեն նորան: 17 Եւ նորանց ասեց. Այդ ի՞նչ բաներ են, որ դորանց համար իրար հետ վիճում էք գնալիս, եւ տրտմած էք:

18 Եւ պատասխանեց նորանցից մէկը, անունը Կղէոպաս, եւ ասեց նորան. Դո՞ւ ես միայն բնակվում Երուսաղէմում, որ չ'իմացար այն բաները, որ այս օրերին եղան նորանում: 19 Եւ նա ասեց նորանց. Ո՞ր բաները. եւ նորանք ասեցին. Յիսուս Նազովրեցու մասին, որ մի մարգարէ մարդ էր, զօրաւոր գործերով Աստուծո եւ բոլոր ժողովրդի առաջին: 20 Թէ ինչպէս մեր քահանայապետները եւ իշխանները մահի դատաստանի մատնեցին նորան, եւ խաչեցին նորան: 21 Իսկ մենք հոյս ունէինք թէ նա է, որ Իսրայէլին փրկելու էր. այլ այսու ամենայնիվ սա երրորդ օրն է, որ այս բաները եղան:

22 Բայց մի քանի կանայք էլ մեր միջից զարմացրին մեզ, որ առաւօտանց կանուխ գնացին գերեզմանը: 23 Եւ նրա մարմինը չ'գտած՝ եկան եւ ասեցին, թէ հրեշտակների տեսիլք են տեսել, որ ասում էին, թէ նա կենդանի է: 24 Եւ մեզանից ոմանք գնացին գերեզմանը, եւ իսկ այնպէս գտան, ինչպէս կանայք ասեցին, բայց նորան չ'տեսան: 25 Եւ նա ասեց նորանց. Ով անմիտներ եւ թուլասիրտներ, հավատալու այն բոլոր բաներին, որ մարգարէները խօսեցին: 26 Չէ՞ որ պէտք էր՝ որ Քրիստոսը այս չարչարանքները քաշէր եւ իր փառքը մտնէր:

27 Եւ սկսելով Մովսէսից եւ բոլոր մարգարէներից մեկնում էր նորանց՝ ինչ որ գրքերի մէջ գրված էր իր մասին: 28 Եւ մօտեցան այն գիւղին, ուր որ գնում էին. եւ նա այնպէս էր ցույց տալիս, թէ ավելի հեռու տեղ է գնում: 29 Եւ նորանք բռնադատեցին նորան եւ ասեցին. Մնա մեզ հետ, որովհետեւ իրիկվա դէմ է եւ օրն իջել է. եւ նա մտավ որ նորանց հետ մնա: 30 Եւ եղաւ երբոր նա նորանց հետ սեղան նստեց, հաց առավ՝ օրհնեց, կտրեց եւ տվեց նորանց: 31 Եւ նորանց աչքերը բացվեցին եւ նորան ճանաչեցին. եւ նա աներեվույթ եղավ նորանցից: 32 Եւ իրար ասեցին. Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբոր ճանապարհին մեզ հետ խօսում էր, եւ ինչպէս գրքերը բաց էր անում մեզ համար:

I. ՆՈՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԳՐՎԱԾՔՆԵՐԸ ԲԱՑՎԵՑԻՆ:

27 Եւ սկսելով Մովսէսից եւ բոլոր մարգարէներից մեկնում էր նորանց՝ ինչ որ գրքերի մէջ գրված էր իր մասին:

Ի՞նչ է նշանակում Հիսուսը մեզ իշխանություն է տվել:

*Ղուկ. 24.44-46 - 44 Եւ ասեց նորանց. Այս այն բաներն են՝ որ ձեզ հետ խօսեցի, քանի որ ես ձեզ հետ էի, թէ պէտք է կատարուի Մովսէսի օրենքումը եւ մարգարէներումը եւ սաղմոսներումը բոլոր ինձ համար գրուածները: 45 Այն ժամանակ նորանց **միտքը բացվեց,** որ գրքերը հասկանան: 46 Եւ նորանց ասեց թէ Այսպէս է գրված, եւ այսպէս պէտք էր Քրիստոսին չարչարվել եւ երրորդ օրը մեռելների միջից հարություն առնել.*

Գործ. 8.35 - 35 Փիլիպպոսն էլ իր բերանը բացեց, եւ այս գրքից սկսած՝ Հիսուսն աւետարանեց Եթովպացի ներքինին:

II. ՆՈՐԱՆՑ ԱՉՔԵՐԸ ԲԱՑՎԵՑԻՆ:

16 Բայց նորանց աչքերը բռնված էին, որ չճանաչեն նորան:

30 Եւ եղավ երբոր նա նորանց հետ սեղան նստեց, հաց առավ՝ օրհնեց, կտրեց եւ տվեց նորանց: 31 Եւ նորանց աչքերը բացվեցին եւ նորան ճանաչեցին.

- ***Գործք 9 – Պողոս Առաքյալը Դամասկոսի ճանապարհին:***

2 Կոր. 3.13-14 - 13 Եւ ոչ ինչպես Մովսեսը, որ իր երեսին քող էր գցում, որպեսզի Իսրայելի որդիները նրա անցողիկ փառքի վերջը չտեսնեն:. 14 Բայց նրանց միտքը կուրացավ, որովհետև մինչև այսօր Հին Կտակարանի ընթերցումի վրա այդ քողը մնում է, որովհետև Քրիստոսի միջոցով է վերանալու::

Մատթեոս 27.51 – Եվ ահա տաճարի վարագույրը վերից վար երկու մասի պատռվեց. երկիրը ցնցվեց, ժայռերը ճեղքվեցին:

III. ՆՐԱՆՑ ՍՐՏԵՐԸ ԲՈՐԲՈՔՎԵՑԻՆ:

32 Եւ իրար ասեցին. Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբոր ճանապարհին մեզ հետ խօսում էր, եւ ինչպէս գրքերը բաց էր անում մեզ համար:

Ղուկ. 12.35 - 35 Թող ձեր գօտիները պինդ կապուած լինին մէջքին, եւ ճրագները վառուած:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: